այսպէս յայտնի իբրեւ զանհաւատ արհամարհանաւք առ ոտն հարկանէ զսրբութիւնն եւ աներկիւղ կամակարութեամբ գործէ զաղտեղի գիճութիւնս»:

5 Եւ լուեալ զայսպիսի բանս սրբոյ[1] քահանայապետին Հայոց Սահակայ ի նախարարացն Հայոց՝ պատասխանի տուեալ ասէ. «Իբրեւ ոչ եթէ նոր ինչ լսելով այսաւր ի ձէնջ, ճանաչեմ զասացեալսդ ձեր. արդ գիտեմ, զի զկծեալ սրտիւք խաւսիք զայսպիսի խաւսս: *6* Եւ ինձ անհնար է ասել, եթէ այլաբանք ինչ եւ ոչ ստուգութեամբ պատմին ասացեալքդ ի ձէնջ. բայց արդ՝ ո՛րպիսի հնարիւք ըստ արժանի հոգեւոր մարդկան պարտ է զելս իրացդ գտանել՝ զայն արժան է խորհել ամենեցուն եւ առնել»:

7 Եւ նոցա առ հասարակ պատասխանի տուեալ ասեն ցսուրբ կաթողիկոսն Սահակ, թէ «Մեք եւ ոչ մի ինչ ելս այլ եւ հնարս իրացն գտանել կարող եմք, բայց բողոքել թագաւորին Պարսից՝ ի բաց բառնալ ի թագաւորութենէ այտի[2], որում ինքն իսկ ինքեամբ չեղեւ արժանի ժառանգելոյ. այլ մեզ քան զայդ ո՛չ իմանալ ինչ է եւ ոչ առնել: *8* Այլ զքեզ աղաչեմք միաբանել այսմ խորհրդոյ մեզ. եւ չէ պարտ[3] այսպիսի անսրբութեանց այլ եւ պղծութեանց[4] գործոյ թագաւորին հաղորդ լինել»:

9 Իսկ սուրբ հոգեւոր կաթողիկոսն Հայոց Սահակ, իբրեւ լսէր զայս ամենայն ի նախարարացն Հայոց, եւ ստուգիւ ճանաչէր, եթէ ի նոյն միտս եւ ի նոյն խորհուրդս հաստատեալ են բովանդակ աւագանի աշխարհին՝ ի մեծ տրտմութիւն եւ յանմխիթար սուգ[5] ընկղմեալ լինէր. եւ հեղեալ արտասուաց վտակս առաջի բազմութեան նախարարացն Հայոց՝ հրաժարէր առնել պատասխանի բանիցն մինչեւ յաւուրս բազումս: *10* Եւ արգելեալ զինքն ի սենեակ՝ ողբոց միայն եւ արտասուաց լսէին ձայնս, մերձեալ ի դուրս սենեկին. քանզի տեսանող ակամբ ի զաւրութենէ[6] սուրբ Հոգւոյն տեսանէր այրն Աստուծոյ ի սպառ ի սպուռ զկործանումն աշխարհիս Հայոց: *11* Իսկ յետ բազում աւուրց համարձակեալ ոմանք յեպիսկոպոսաց, որք հանապազ պարապէին առ դուրս սրբոյն,- չկարացեալք եւ առ վայր մի տեւել[7] յառատաբուղխ[8] եւ ի շնորհալից վարդապետութենէ առնն, որ *քաղցր էր ի ճաշակելիս*

1 *ՏՏ.* սուրբ
2 *Ամ.* այդի
3 *Գտ.* եւ ոչ պարտ
4 *Զ.* սրբութեան խորհել զայլ, եւ պղծութեանց
5 *Զ.* սուք
6 *ՏՏ.* եւ ի զօրութենէ
7 *Գտ.* առ վայր տեւել
8 *Զ.* յառատաբուխ